ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրավորման ծառայությունների միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ. Հովհաննիսյանը, Վ. Պետրոսյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1)**
2. **«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան,փ.Շ. 5/9,74)**
3. **«ՖՎ&Գ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Ազատության 24)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

1. **«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ** կողմից ներկայացված Հավելված 8 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում լրացվել է.

Ա/ Վճարման պահանջագրի համարը (լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս) ,

Բ/ Ներկայացման ամսաթիվը (լրացվում է վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը) ,

2. **«ՖՎ&Գ» ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 8 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում լրացվել է ներկայացման ամսաթիվը և բացակայում է արժույթի կոդը:

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ, «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ կազմակերպությունների կողմից տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը ներկայացված է մեկ PDF ֆայլով և էլեկտրոնային ստորագրությունը դրված է միայն տուժանքի համաձայնության վրա:

Հանձնաժողովը որոշեց՝

Նիստը կասեցնել մինչև լիազոր մարմնից ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարի հարցման պատասխան ստանալը:

Հարցումն է. թե արդյո՞ք մասնակցին մերժելու հիմք է հանդիսանում մասնակցի կողմից տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը մեկ PDF ֆայլով ներկայացնելու դեպքում միայն տուժանքի համաձայնության վրա կամ միայն վճարման պահանջագրի վրա էլեկտրոնային ստորագրելը:

Հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ՖՆ-ից պարզաբանում ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Է.Արշակյան

_____ Վ.Գսպոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրավորման ծառայությունների միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.07.2017թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ. Հովհաննիսյանը, Վ. Պետրոսյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

ՀՀ ՖՆ պարզաբանման վերաբերյալ

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պարզաբանման, մասնակցի կողմից տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը մեկ PDF ֆայլով ներկայացնելու դեպքում միայն տուժանքի համաձայնության վրա կամ միայն վճարման պահանջագրի վրա էլեկտրոնային ստորագրելը մերժման հիմք չի հանդիսանում:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/				
		Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ*	«ՖՎ&Գ» ՍՊԸ	«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ*
1	Ծրագրավորման ծառայություններ	1	600000	490000	500000	2080000

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել **«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ և «ՖՎ&Գ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2017թ. հուլիսի 20-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Է.Արշակյան

_____ Վ.Գսպոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրավորման ծառայությունների միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ. Հովհաննիսյանը, Վ. Պետրոսյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը և **«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ տնօրեն՝ Անդրանիկ Ջավադյանը:**

1. Միաժամանակյա բանակցության մասին

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ –ն 1 չափաբաժնի համար առաջարկեց նոր գին.

/ ՀՀ դրամ/

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախահաշվային գին	Գինը՝ առանց ԱԱՀ-ի
1	Ծրագրավորման ծառայություններ	600000	600000

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ն հասնդիսանում է ԱԱՀ չվճարող:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին:**

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 11.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Է.Արշակյան

_____ Վ.Գսպոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ տնօրեն՝ **Անդրանիկ Ջավադյան**